

հեթանոսաց համար : Ինչ որ հոն
նիւթական սահմանաւորութեամբ մաս-
նաւոր ժողովրդեան մը համար գիտ-
ուած էր, իբրեւ նախանկար օրինակ
հանդերձելոյ, հոս հոգի-որ սահմա-
նաւորութեամբ մարդկային ազգին
համար սահմանդրուած է իբրեւ ան
օրինակին ճշմարտութիւնը (Արշ. Միգ.
Տրիտ. Ժող. մասն Ա. գլ. Թ. 19.) :
Ըսանկ կը հաւատայ ամեն կաթուղե-
կեայ : Ըսով կաթուղիկեայ Կեղեկե-
ցեայ կառավարութեան ու վարդա-
պետութեան միութիւնն ապահով-
ցած է : 77

ԴԱՍՅԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵՐԱՊԱՏԻՒ ԺՈՂՈՎ

(Հարունակութիւն, տես թիւ 2),

Այս ամենի ամենախորին հիմքը
հոգեկան կեանքի սեռի սեպհական
օժիտի մէջն է, որ կայ անեւելոյթ աչ-
խարհին հաւատարմ, որի մէջ երեւելին
թաքնուած է : Հոգու այս կրօնական
ընթացքի ջերմութիւնն էլ բաւական
նութիւն է գտնուած միայն անձնակա-
նի մէջ : Այն թէ մի ինչ և իցէ ընդ
հանուր բան էր (կամ ուսումն, կամ
գաղափար), որ կանանց գէտ յաւել-
տարանը գրաւեց, այլ Վրիստոտի մէջ
անձնաւորւած Եստուծոյ սէրը, և այս-
պէս կը ներգործի բրիստոնէութիւնը,
որը իւրաքանչիւր առանձին հոգու
արժանաւորութիւնը այսպէս բարձ-
րացնում է, անձնաւորելով գործնալ
որոնց մէջ : Արանցում վկայ մի առան-
ձին հիմնուած տիրապետութիւն ըն-
դունակութեան, այլ աւելի յաճախ
մի խուռն թափանցութիւն ամբողջ
էութեան : Անձնական կեանքի այս

անմիջապիստե թեան հետ սերտ կապ-
ւած է խղճի մեծամեծ քնքշութիւնը
և սիրոյ անձնանու էր մասնակցութիւ-
նը, որը շատ անգամ մեզ հրաշագործ
բան է երեւում. որովհետեւ վերա-
ծին սէրը ամէն ինչ կարող է, նաեւ
ներգործել իրա սեպհական անձին վը-
րայ : Վանկցա անգամ ջղային կեանքի
(Verveleben) անհանգստութեանց յա-
ռաջացած յուզմունքների ստատիկ-
թիւնը. միաւորուել է կոմքի մի պարզ
զօրութեան ուժի հետ, ուր կարողա-
յել է միւսներին օժանդակ լինիլ
ծառայիչ սիրով : Այսպիսի սիրոյն զոհ
չ'կայ, ինչպէս տշխարհը անուանում
է. աաւով նա ստանում է. զրկուե-
լով շահում : Արդ այս չէ պատկա-
նում այն ամենամեծ և ամենագեղե-
ցիկ դասերին. որոնք կան և են զար-
գացման գործում այնպիսի սիրով
այսպիսի քրիստոնէական ուրախութիւ,
որը միւսներին բաղդաւորիչ և իրա-
նով երջանկացուցիչ է :

Այս ցոյց տուի այն նպատակը, ու-
րի վրայ ամէն գէպքում պիտի ուղ-
ղւի կանանց կրթութիւնը : Այս
ընդհանուր եղբայրակցութեան, թէ հիմ-
նաւոր կերպով իրարից պանաղան
մարմնական և հոգեկան ընդունա-
կութիւնները և տնային հանգա-
մանքներն իրանց անհամարելի տար-
բերութեամբ նշանակութիւն կը գրա-
նեն. և նմանապէս թէ ուր մի առան-
ձին, օրինակի համար, մի արհեստական
տաղանդ յառաջանայր կը գտնին ի-
րան սեպհական հոգացողութիւնը :
Իայց ապագայն ծածկուած է : Կա-
նանց կեանքի շրջանը, որի համար
նախապատրաստեւել է, ընտանիքն է,
և կեանքի ընդհանուր պաշտօնը ըն-
տանիքի մէջ և նրանից դուրս, միւս-
ներին օգնական լինիլ :

Երբորդ՝ իրագործողէ յետ-ը. ու է

զարգացնում և ինչպէս պիտի զարգա-
նայ : Կարծելով՝ բնութեան համե-
մատ պարտաւորութիւնը ծնողներէն
է մնում : Երանց օգնութիւն տալիս են
բացի շատ բանէ, ինչ զարգացման մէջ
օժանդակ է լինում առանց իրա վրայ
յոյս ունենալու և շատ անգամ ան-
կոչ, մանաւանդ եկեղեցին և վարժա-
րանը :

Եթէ մենք մի քիչ յետ նայինք
զարգացողութեան պատմութեան վա-
րայ, կը տեսնենք, որ դեռ անցեալ
դարումը և ներկայիս սկզբումը ազն-
կերանց զարգացման վարժարանը գոչ
խառնոր գործ առաջ տանողներին կար-
գումը չէր հաշուում : Սոյն կրթու-
թեան առաջին տարեքներն էին ու-
սանում հրապարակական վարժա-
րաններումը, իսկ բոլոր միւսները՝ տը-
ներումը, և աւելի դիպում անօր :

Բարձրագոյն կարգերումը շատ
անգամ տնային զարգացման տեղը ձե-
մարանականը (Institutserziehung) բռնում
էր, որի նպատակը գլխաւորաբար
կայանում էր հասարակական վար-
մանց մէջ՝ ֆրանսիացւոց նախակրթ-
թիւնների ազդեցութեամբ : այս պատ-
ճառով կաքաւելու վարժապետը և
չնորհաց ուսուցիչը (Maitre de danse e
professor de graces) մեծ դեր էին խա-
ղում : Եւսկից առաջ ուսանում էր
մի քիչ ֆրանսերէն, կաքաւիլ, երա-
ժշտութիւն (մուզիկ) և գիւցարա-
նութիւն (միւթօրգի) : Եւս վերջի-
նը՝ ստանաւորներ և արհեստական
ձեւակերպութիւններ հասկանալու
համար, ինչպէս օրինակի համար, յոյու-
նի իշխանուհի, Եւսկեայ Վալիցինը,
երբ Բրիտանու քաղաքի մի կաթսի-
քական զարգացման տանից՝ յետ դա-
ռաւ այստեղ Բերլին իրա ծնողների

մօտ, և միանգամ թիրգարանում (1)
զրօնելիս՝ Եւսկեային մի սուրբ Եւսկե-
մաքի, և Վ Ենուսին Սարիամ կուսին
տեղ ընդունեց և պատկառանք եր-
կրդադութիւն արաւ, իսկայն նրան
այս տեղ մի ֆրանսիական օրիորդաց
վարժատուն տուեցին՝ այսպիսի սխա-
լանքները ուղղելու և դահլճի համե-
մատ (Saconmässig) կրթելու համար : Եւս
ժամանակը նշանաւոր վարժարանա-
կան կրթութիւնը արդէն վատահամ-
բաւ էր, ինչպէս դասակարգեալ նե-
րածութիւն գէպ ի սնապերճութիւ-
նը, որը պիտի փոխարինել էր : ինչ
որ անէր ընտանիքի գոգում մանկա-
կան և մայրական սերը և մի առողջ
բնական զգացմունք :

Սիջակ կարգերումը՝ զարգացու-
մը երկար ժամանակ մնաց բոլորովին
պարզ և զուրկ՝ կրթութեան ամէն
ունայն շքեղութեանց : այն տեղ էր
որոնքը հասկացող տան կին : Եւս
տանում էր Եւսուածաշնչից և տան
գործերից իրա ամենալաւ կրթու-
թիւնը, որով և ունէր այնու ամիւ-
մի պարզ հայեցում՝ իրան և աշ-
խարհը հասկանալու, այն կրթութի
չտուող, պարզ և զօրեղ զարգաց-
մամբ, ինչպէս լաւ օրինակներ են մեզ
ներկայացնում այս մասին օրինակի
համար, Վ անդորեկեան (1) համբաւա-
բերի թերեկան և իրա դուստր Եւ-
րօլինէ Պերթէսը : Եւսց արդէն Եւս-
տուս Սէօգէրը (2) անցեալ տարի մի-
ջից յետոյ՝ գանգաւում է այս կար-
գի սահմանն էլ ֆրանսիացնող ազդե-
ցութիւնների վրայ և պահանջելով՝
յետ է նայում գէպ ի հին լաւ ժա-
մանակը : Ստորերում եմ նրա հայ-
բենասիրական երեւակայութիւննե-

(1) Սի պարտեզէ (Pare) Բերլինում և ժողո-
վելիք իրբեւ զրօսարան է ծառայում : Թեեւ

րից «հիւսեղու սենեկի» (Spinnstube) գեղեցիկ պատկերը և բարեհոգի կինը, որի համար ասում է նա. «Այդքի աւելի չէ դովաբանիլ» (Schmeicheln) և ոչ որի էլ պակաս գովաբանութիւն արիլ, նրա հայեացքը ամենի վրայ սիրում էր զուարճութիւն և բաւականութիւն ։

Բայց իսկոյն հետեւեալ պարբերութեան «ամենապիւրի հարսնուցուն» մէջ հենգնում է նա այսպէս անուանուած գեղեցիկ զարգացումը. որը նա առողջ խոհականութեան խոսքովիքն (Frisur) է անուանում. և աւելցնում է թէ ի հարկէ ծիծաղելի է յառաջագոյն խոսքայինների, քանթէ կը տուէին վրայ մտածելը ։ «Փարթամութիւնը պարկեշտ է, եթէ աւելորդութիւնը նրա հիմքումն է, բայց այն տեղ ուր փարթամութիւնը յուզում է հարկաւորութեան ծախքով, ուր հոգին կրում է դեռ պակասութիւն չգաւոր ճշմարտութիւններում և այնու ամենայնիւ կամենում է բարձրանալ անգոր թռիչով բարձրագոյն իմաստութեան սեղանի վրայ, ուր մեր գուստրները ֆրանսերէն և անգղիերէն են թոթովում առանց ունենալու մի որ և իցէ ամենափոքր տեսութիւն կամ գործնականութիւն տուն պահելում, այն տեղ այս փարթամութիւնը հոգու համար ոչ այլ ինչ է, բայց եթէ մի փառաւոր թշուառութիւն ։ Այս փարթամութիւնը, ապականելով հոգին՝ հեռացնում հին

պատուաւոր առաքինութիւններից որոնցմով ինչպէս մի թաւշեայ (Samtene) գտակով մեր մայրերը շրջում էին. Սա յարուցանում է զզուանք դէպ ի ամենօրեայ անային պարտաւորութիւնները ։

Ե. Ե. Սուսոյի էմիլը այն ժամանակը շատերին երեւեցաւ բացող դէպի խոհական զարգացումը վերադառնալու ճանապարհը ։ «Վէն ինչ լաւ է, ինչպէս բնութեւնը ձեռքից գաւոր է գալիս, ամեն ինչ մարդու ձեռքերի տակ վատանում է, այսպէս է սկում նա մի բնութեան աւետարան, մի հակասականութիւն իրա մէջ և աւերնդունակ ոչ մի հոգի լուսաւորելու և փրկելու ։ Վերամտնեցողութեւնը գունեցաւ սաստիկ մեծ ցանկութիւն ։ Նախայիշեալ իշխանուհի Վալեյինն էլ Սուսոյի գաղափարների ներքոյ էր ։ Ե. Ե. Նիմայերը ⁽¹⁾ պատմում է թէ նա երեւել է իրա որդու եւ գուստրի հետ Սալէ քաղաքի մանկադպրոցականում (Dadagogium), ուսուցանելու ձեւը ճշգիւ տեղեկանալու համար ։ Այդու երեխանց (այն ժամանակ 11-12 տարեկան) հագուստները բոլորովին պարզ են եղել մաղերը կոկ սանարած, ոտները բոբիկ, երեսները օղից եւ արեւից սեւացած ։ Մայրը ինքը՝ վարժապետների և աշակերտների անձանց թաղացոյց է բերել պիւթագորեսան օրէնքից սեւ տախտակի վրայ, և նմանապէս իր երեխանց մաթեմատիքական խնդիրներ լուծել աւել ։ Յետոյ թէ դրանք լիճն են գնացել աղբիւնների ⁽²⁾ ։

Թիւրքոյն անունն նշանակում է անասնոց այգի, սակայն անասուններ չկան մէջը, այլ բաւականին արձաններ ։

(1) Վանդաբեկ մի քաղաք է, ուր Ժողովրդային բանաստեղծ Անտոխոս քահանայն լոյս էր բնծալում լրագիր «Վանդաբեկեան համբաւարեր» անունով ։

(2) Սա էր շատ հայրենասէր գրագետ, իրաւագետ կամ քաղաքագետ, Նայնպէս և պատմաբան Ժամանակակից Շիլլերի և Գեթեի ։

(1) Նշանաւոր էր իբրեւ Աստուածաբան, բայց աւելի նշանաւոր, իբրեւ մանկավարժ, ապրում էր Ե. Ե. գաւոր սկզբում ։

(2) Այս աղբիւնները կամ ծաղկոյրը Վենայ յանձնարան են և մինչեւ այժմ էլ մի ձեւ կազմած ունին և զլիարարակէս թագաւորական աղաքանին վրայ զբաղւած են, երեւելին իբրեւ հմուտ լողորդներ ։

յողանալու շնորհքը տեսնելու համար։
Այն տեղ մօր նշան տալով՝ խմայել
են գուստրը և որդին թէ՛ իրանք էլ
աղիփներին հետ կարողեն անիլ։ Խսիցն
իրանց վրայից տէն են գցել վերին
թեթեւ դգեստը, հեշտութեամբ
մալել մի ամբառնալի կամուրջի (Zug-
bruck) գերանի վրայ, իրանց այն բարձ-
րութեանց հեղեղի մէջ նետել, գե-
տումը դէպի վեր և դէպի վար լողա-
ցել, իբրեւ բալլերովին ընտել այս տար-
րին մէջ, և երբ ցամանքն են գուրս
եկել, գովատանքներով ընդունել լը-
ղանալու շնորհքի վարժապետներէից։

Աի օրինակ. ինչպէս սովորաբար
վերացական կանսններին պատահու-
մէ։ Շուտով մարդ առանց նկատելու
առաջին փայլում նրանց անհաւատա-
րիմ կը լինի։ Ինուծիւն, և նրա հետ
միասին ամենեւին չճանաչել, թէ ինչ
ղանաղանու թիւն է պահանջում աղ-
ջակաց բնութիւնը ազայի բնութեց։
Ինուծիւնը և կրթութիւնը, ինչպէս
մէկը՝ նոյնպէս միւսը պարունակում է
օգուտ և վտանգ զարգացման համար
բանը հիմի նրանց իսկական յարաբե-
րութիւնը ամէն մի առանձին դէպ-
քում գտնելումն է։

Տնային մանկավարժութեան մէջ
մինչեւ այսօր մի բնութեան մէջ թե-
րահաւատութիւն հազուատես բան
չէ։ Թուլատրիչ արդեօք, հաւատա-
լով բնութեան, որը արդէն մերժե-
լու է, ինչ իրան համեմատ ընդու-
նելու, ինչ իրան ծառայիչ լինի։ Աի
յիմար յոյս է շատ դէպքերումն մի
շատ անգամ գծուար պատժելի ան-
հոգացողութիւն, և թէ ամենա-
գահ հասակին ոչինչ չէ արգելում.
այսպէս օրինակի համար, և թէ տան
բոլոր գրեղէն պաշարը երախային ա-
ռաջ ազատ բաց է լինում։ Այդ զար-

մանալի է. և թէ տեղէ գտնում և
իրողութիւն արդէն 12-13 տարեկան
աղջկերանց մօտ, որ համարձակում
են. ճաշակել ամեն բան. կար-
դալ շեքրայիլը, վիպատանու թիւններ
(Բոմաններ), ինչպէս որ իրանց
ձեռքն են ընկնում։

Արան հակառակը բնու թիւն չճա-
նաչելը և ճնշելն է, ուր բնու թիւնը
կարօտում է միայն առաջնորդելու
կամ սահմանաւորելու։ Այս չէմ մը
տածում միայն այն տեսակ զօրեղու-
թիւն, ինչպէս, օրինակի համար,
բանասէր Ֆ. Լ. Վլշթը գործ դը-
րած սլիտի լինի զարգացման մէջ, երբ
նա՝ իրա գուստրներէից մինը առա-
ւօտը դարձեալ իրա իրազները նրկա-
րագրելով պատմելուց յետոյ՝ երեւա-
կայութեան սեթեւեթութիւնի վտանգը
(Die Gefahr eines Übersouchnerns) մերժելու
համար. ձեռքը սաստկապէս սեղանին
խտեց և բարկանալով նրան ասաց.
“Այսօրից սկսած՝ էլ չպիտի երազել ու
որպէս թէ նա իրա կեանքում էլ եր-
բէք երազ չէ տեսել. այլ առաւել
ես մոքումս ունիմ իւրաքանչիւր
քայլում այս վերահասութիւնը և հո-
գատարութիւնը, որը կտրծում է,
թէ պարտ է իւրաքանչիւր բնական
շարժում տեղնուտ զը ու զղել, փողից
մինչեւ ու շ զարգացնում է. և վստա
միշտ միայն այն տեղէ կամինում լա-
ւայնել, ուր դուրս է գալիս, առանց
իւր նայեացքը աւելի ուղղելու նրա
սեպհական տեղի և ծագման վրայ.
Երեխայները ամէն տեղ պահպանե-
լու վախիկներով նեղութիւն կրելը և
նրանց իսկապէս այն շինեջ. ինչ որ
մարդ ինքն է գտնել։ Այսրական հո-
գացողութեան սխալանաց որ պատ-
կերները այս տեղից նկարելի չեն։
Աի մօր, որը իրա շարունակ մտայու-
ղութեան պատճառով միշտ իրա երե-

խոնց հետ զըաղւած և տանջւած էր և այնու ամիւ զարգացման կողմանէ բոլորովին յաջողութիւն չունէր, ասաց մի ուրիշը. նրա տրտնջալուն վրայ. և ես ձեզ կ'առեմ ինչէ պակաս ձեր երեսանց. անգլո-վի-ն (Vernaclosaigung):

Ի՛նչ որ նա այսպէս անուանեց, 'ի հարկէ մի քիչ այլապէս է. Նա, որը այսպէս ասաց, իրա սեպհական երեւ խայներին վրայ պահել էր մի բաց աչք այն մասին, ինչ որ նրանք բնութեանց սեպհականութիւն էին ստացել, բայց ինչպէս նրանք ներքուստ զանազան էին, այդ մասին մի ուրախ հաւատ դէպ ի՛նչու ծոյ ողորմած կառավարութիւն և պահպանողութիւնը. ապա հոգացողութիւն, թէ երեսայները մեծանան պարզ և ոչ մի տեղ ազահութիւն չ'զրգուող բաների փրկարար սովորութեամբ. և էլ ուրիշ ոչինչ չիմանան, բայց միայն թէ երեսայները պարտաւոր են լինիլ խօսքի հնազանդ, ամէն բանում և խօսքում ճշմարիտ և բայ և վերջապէս մեծ հոգացողութեամբ մտաւոր: Այս երեւքիցն էր կայանում նրա կանոնների գումարը: Սիւս բոլոր բաներումը՝ երեսայներին զարգացրել էր միատեղ կենակցութիւնը՝ տան մաքուր, առողջ դրական և ոչ բացասական հոգւով լցուած եթերի մէջ: Սօր հետ սովորել էին նրանք աղօթել և մայրը չէր դադարում նրանց աղօթող սրտի վրայ գրկելուց:

Կանանց զարգացման վարժարանները երբեք չեն կարող ծնողաց տան և մօր տեղը բոլորովին բռնել: Բայց թէ այս վարժարանները կարող են մերձենալ և հաղորդել մի դաստիարակութիւն և մի կրթութիւն, որը հարկաւոր էլ է փորձառական կեանքի մէջ, ապացուցանում են գերմանիացումը շատ գերազանց առաջնոր

դուած և կարգադրուած և մանկավարժական գործերի բոլոր յարաբերութիւններից լիովին ազատն տնէրի և կառուցուածների հետեւանքները:

Վարժարանը պիտի ոչ այլ ինչ լինի, բայց եթէ տան օգնական և այսպէս էլ էր հենց, երբ աղջկերանց զարգացումը գլխաւորապէս տնային էր և գործնականապէս կենսքումը: Այս յարաբերութիւնը յեղտիտութիւն է. աղջկերանց զարգացումը գլխաւորապէս վարժարանական է դառնիլ և դէպ ի վարժարանի գիտութիւնը ուղղուիլ: Հայերմանները (1) աղջկերանց վարժարանը անուանեց մի անհրաժեշտ կարեւորութիւն ընտանեկան զարգացման համար, որին մերձենալու պիտի վարժարանը միշտ աշխատի: Բայց թէ նրա այս բմբռնողութիւնը ուղիղն է, ամէնքը յօժարակամ կը խօստովանին, որոնք տեսականապէս կամ գործնականապէս այս մանկավարժական դաշտում աշխատակից են: Այն որ չէ վիճում թէ աղջկերանց վարժարանի ամենակարեւոր դասը իսկական զարգացումն է. Այս ինչպէս անհերքելի ճշմարտութիւն (Adiom) է գիտում: Աղջկերանց վարժարանը պիտի լինի ընդարձակացած ընտանիք: Այժմ հարցնելու է, թէ ինչպէս կարող է լինիլ: Եւ իսկոյն որուն հետ կցելու է, թէ այն դասին միայն մի մերձաւոր եղանակով էլ համապատասխանել կարող չեն այս տեսակ վարժարաններից շատերը արդէն իրանց ընդարձակութեան պատճառով:

(1) Ամենաերեւելի աղտոտամիտ առտուածարաններից մէկն էր, փրօֆիտոր և քահանայ Բերկնու, ամենահմուտ և հիմնաւոր բացատրիչ Պլատոնի և Հոյնոցսի: